Կրոնական ոլորտում ատելության խոսքին նվիրված փորձագիտական հարթակային քննարկում

19 մայիսի 2019թ.

Մասնակցեցին 7 փորձագետներ կրոնագիտության, սոցիոլոգիայի, մշակութաբանության ոլորտից:

Քննարկման սկզբից վարողի կողմից հարց առաջ քաշվեց, թե հաշվի առնելով կրոնի գնալով մեծացող ազդեցությունը Հայաստանի հասարակության վրա՝ արդյո՞ք կրոնական ոլորտում ատելության խոսքը կարող է պայմանավորված լինել հենց կրոնական ուսմունքի կամ ուսմունքների բովանդակությամբ, դավանաբանությամբ:

Փորձագետներից մեկը չհամաձայնեց, որ այժմ կրոնի ազդեցությունը Հայաստանի հասարակության մեջ ավելանում է: Նրա կարծիքով՝ հեղափոխությունից հետո դանդաղորեն, բայց հակառակ տենդենցն է զարգանում՝ ապակղերականացման, ընդ որում դա սկիզբ է առնում հենց իշխանության եկած ուժից, որն էլ այս ոլորտում եւս գործընթացների նախաձեռնողներից է: Մասնավորապես, վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ նրա զինակիցների հայտարարությունները պետությունից եկեղեցու անջատ լինելու մասին, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հանդեպ նրա ընդդիմախոսների սուր քննադատությունը եւ ակցիաները, մեղադրանքները կոռուպցիայում ներքաշված լինելու մեջ եւ այլն, որին պետական մարմինները որեւէ կերպ չխառնվեցին եւ անգամ ԱԺ-ն հրաժարվեց պետական պահպանության ներքո վերցնել նրան. այս ամենը ուղերձ էր հասարակությանը, որ Հայ առաքելական եկեղեցին այլեւս չի վայելում պետության հովանավորչությունը այն ծավալով, ինչ ծավալով որ վայելում էր նախորդ իշխանությունների օրոք: Ավելին, Նիկոլ Փաշինյանի կողմից իր եւ Պապ թագավորի գործունեության միջեւ զուգահեռներ անցկացնելը ցույց տվեց հասարակությանը, որ իր վերաբերմունքը ՀԱԵ, որպես կառույցի հանդեպ այդքան էլ միարժեք չէ: Հաշվի առնելով Նիկոլ փաշինյանի լեգիտիմության բարձր մակարդակը՝ այս ամենը էապես ազդել է հասարակության ներսում ՀԱԵ ընկալման վրա:

Փորձագետներից մյուսը համաձայնեց այն թեզի հետ, որ ատելության եւ դրա արտահայտման խրախուսումը ունի որոշակի արմատներ դավանաբանության եւ ընդհանրապես կրոնական ուսմունքի մեջ: Մասնավորապես, քրիստոնեության հիմքը հանդիսացող Աստվածաշունչը ներկայացնում է հայր Աստծուն մի կողմից որպես սիրո Աստված, մյուս կողմից, համենայնդեպս մերօրյա բոլոր հիմնական քրիստոնեական ուղղությունների ներկայացուցիչները նույնացնում են նրան հինկտակարանյան Եհովա աստծու հետ: Վերջինը հայտնի է իր հակասական, հաճախ՝ այլատյաց, անգամ՝ մարդատյաց հրահանգներով եւ պատվիրաներով: Նման Աստված ունենալու դեպքում շատ հեշտ է հիմնավորել նրա պահվածքով եւ

հանձնարարականներով ցանկացած հանցագործություն թե՛ մարդկության եւ թե՛ անհատի դեմ: Նման հնարավորությունները շատ ավելի քիչ կլինեին, եթե հնարավոր լիներ տարանջատել Քրիստոսին եւ նորկտակարանյան Աստծուն հինկտակարանյան Եհովա աստծուց: Սակայն դա բուն հավատացյալների, նրանց կրոնական առաջնորդների եւ եկեղեցիների գործն է, մյուս կողմից, անգամ դա չի կարող լիովին ազատել կրոնը այլատյացությունից, քանի որ անգամ Քրիստոսի ասածներում, համենայնդեպս այն տեսքով, որով դրանք հասել են մեր օրեր, կան ներկայից մարդասիրական/հումանիստական բարոյագիտության/էթիկայի հետ անհամատեղելի դրույթներ:

Մեկ այլ մասնակից կարծիք հայտնեց, որ հակաարդյունավետ է խնդրի լուծումը գտնել դավանաբանության բարեփոխումների մեջ, քանի որ կրոնի էությունն է հենց հակասում հումանիստական մոտեցումներին՝ հիմնված ռացիոնալիզմի եւ իրավունքի մերօրյա ընկալումների վրա: Միակ ճանապարհը նա տեսնում է իրավունքի վրա հիմնված օրենքի գերակայության ապահովման մեջ, որը իր մեջ կնախատեսի նաեւ պատժիչ մեխանիզմներ ատելության քարոզ տարածողների հանդեպ: Քանի որ, նա կարծիքով, հավատացյալների մեծ մասի մոտ մտածողական կոնստրուկտը հիմնված չէ տրամաբանության եւ սթափ դատողության, գիտակցության բարձր մակարդակի վրա, այլ այնպիսին է, որ շատ ավելի ընկալողունակ է ոչ թե իրավունքի կատեգորիաների, այլ պատճի եւ խրախուսանքի մեխանիզմների վրա (դժողք-դրախտ), ուրեմն եւ այդ մարդկանց դեպքում՝ ատելության խոսքի վերացման նպատակով կարող են արդյունավետ լինել հենց օրենքով սահմանված պատիժները:

Մասնակիցներից մեկը հաստատեց նախորդ փորձագետի ասածը՝ մեջբերելով եվրոպական փորձը, ուր պարզ տուգանքների մեխանիզմը բավականին արդյունավետ է գործում, ընդ որում ոչ այնքան որպես պատժիչ, որքան որպես կանխարգելիչ մեխանիզմ: Նա նաեւ կարեւոր համարեց լրատվամիջոցների միջեւ բարեվարքության խարտիաների կնքումը, ինչպիսին կա նաեւ Հայաստանում, սակայն դրան միացել են առանցքային լրատվամիջոցների միայն փոքր մասը:

Փարձագետներից մեկը խնդրի լուծման առումով կարեւոր համարեց կրթությունը: Նա պնդեց, որ անհրաժեշտ է հանել դպրոցական առարկաներից Եկեղեցու պատմությունը եւ հակառակ դրան՝ ներդնել քննադատական մտածողության եւ տրամաբանության վրա հիմնված մեթոդաբանություն բոլոր առարկաների դասավանդման համար: Կրոնների պատմությունը՝ զուտ աշխարհայացքի զարգացման նպատակով կարող է տեղ գտնել բարձր դասարանների համաշխարհային պատմության դասագրքում, սակայն դա պետք է լինի իրոք կրոնների ապտմություն, որի ընթացքում անկողմնակալ կերպով կներկայացնեն հիմնական համաշխարհային կրոնները, եւ ոչ թե կտարվի Հայ առաքելական եկեղեցու կրոնական քարոզ՝ ուղեկցվող երեխաների պարտադրված աղոթքով:

Մասնակիցներից մեկը կարծիք հայտնեց, որ քանի դեռ կրոնը շատերի համար բիզնեսի միջոց է՝ նրանք, իրականում կապ չունենալով քրիստոնեական

արժեքների եւ բարոյականության հետ, ագրեսիվորեն հակադարձելու են, անգամ ատելության խոսք եւ քարոզչություն են տարածելու բոլոր նրանց հանդեպ, ովքեր տարածում են աշխարհիկության սկզբունքները, այդ թվում՝ եկեղեվին պետությունից տարանջատելու դրույթը, ովքեր նպատակ ունեն եկեղեցուն պատկանող բիզնեսները բերել հարկային դաշտ:

Սույն փորձագիտական հարթակի աշխատանքները կազմակերպվել են, իսկ արձանագրությունը՝ կազմվել Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Ազատ քաղաքացի» ՔՆԱԿ ՀԿ հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հանուն Հայաստանի երիտասարդության շրջանում արմատականացման, այլատյացության և ատելության քարոզի հաղթահարման» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ազատ քաղաքացի» ՔՆԱԿ ՀԿ հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպականմիության տեսակետները: